

դրուածներ աւելի արժանիք մըն են ցոյց տուած բլրայ Աստուծոյ խօսքը ուսուցանելու մէջ, բլրայ Աստուծոյ կամայ հասկնաւոր ապրելու մէջ, ան աւելցուց նաեւ ուրաւ որ եթէ Նոր Կտակարանի հիման վերայ պիտի խօսինք, ախար կրնայի ըսել թէ բոլոր Առարեալք մեռան առանց խորհելու որեւէ բան մը կամ ընելու որեւէ կարգադրութիւն մը իրենց յաջորդներու մասին: Նոր Կտակարանի մէջ չկայ նաեւ նշան մը որ մեզ թոյլ տայ խորհելու պաշտօնէից զանազանութեան մասին: Տոն միայն օտարեալացեալութեւն հիմնդրաւոր որոյ պաշտօնը հոգեւորական բլրայի աւելի անտեսական էր և երկշէնքու որոնք կը կոչուէին նաեւ եւթսկոպոս, և ամեն աւելի կ'ընտրուէին բան կը մեռնադրուէին:

Ապա խօսեցաւ Rev. Banninga ճնդիկ եկեղեցականը և ըսաւ «Ձեռնադրեալը կ'յուզուի մեռնադրութեան միջոցին ոչ այն ծանր պատասխանաբաւութեան լուծէն որ կ'ստանձնէ իր վրայ, ոչ այն ներկայութիւնէն մեռնադրողներու որոնց առջեւ կը խոնարհի յարգանքով, այլ ներկայութիւնէն Անոր՝ որ մէկ զգայ թէ ինք կ'ստանայ զօրութիւններ, Անոր՝ որուն պէտք ունի ինք բլրայու համար Աստուծոյ օշմարիտ ծառայ մը: Ասիկա յատկութիւն մըն է որ ոչ եկեղեցին, ոչ իր պաշտօնական ներկայացուցիչները չեն կրնար տալ մեռնադրեալին, ասիկա իսկ մըն է որ իրեն կը արուի վերէն և Տէրն ինքն իսկ է: Եւ որ կ'հանգչեցնէ մեռնադրութեան զօրութիւնը և զայն կը զրկէ բարոյքի իր անունով Աւետարանը բոլոր արարածոց: Հանդիսաւոր և անմեռանալի վայրկեան: Արարողութեանց մանրամասնութիւնը կրնան մոռցուիլ, ջնջուիլ, նոյն իսկ մոռցուիլ աւուրները անոնց որք կ'մասնակցէին մեռնադրութեան: Բայց ինչ որ մեռնադրեալը չի մոռնար երբեք, այդ այն պահն է որ իւր Տէրը և ինք զանաւոր են երես առ երես և պարաւարտ կ'զգայ մինչեւ իւր վերջին շուշեր բլրայու Աւետարանին պաշտօնեային: Ո՞վ կրնայ համարձակիլ բռնել թէ այդպիսի պաշտօնանք մը չէ տալած Տիրոջ օրհնութիւնը:

Խօսեցան նաեւ Dr. Serge Boulgakoff, Rev. Josef Soucek և Rev. Davis Fyff, և ուրիշներ, ամենքն ալ թեր ու ղէմ արտայայտեցան: (Շար.)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԱՆՐՈՒԷ

ՈՒՄՊԻՐՈՒՐՈՒՍ.— ԳՈՐԴԻ, ԲԱՆԱՆ,
ԴԱՒԻԹ.— ՏԱՐԲԱՆ.— ՏԱՐՈՆ

(Ա. Մարտի 14-ին 1927, էջ 376)

Ք.

Այնպէս որ մանր քննութեան ենթարկել այս փոքրիկ հատուածը: Ոլիմպիոգորոս խոստանում է «անգիր գրոյցներ» պատմել, բայց խօսում է ինչ որ անյայտ մատենից և նրա մէջ եղած գրոյցներն է հաղորդում: Նա ո՞ր տեղից գիտէր, որ այդ

տեսակ մի մատեն է եղած: Ո՞ր տեղից գիտէր որ նրա մէջ պատմում գրոյցներն էին: Կարող է եւս եղած, որով պատմում է ինքը: Ոլիմպիոգորոս է այն մարդիկը, որ «ասեն» թէ այդ անյայտ մատենի գրոյցներն էին: Կարող է եւս եղած, որով պատմում է ինքը: Այն մարդիկ, որ «ասեն» թէ այդ անյայտ մատենի գրոյցներն էին: Կարող է եւս եղած՝ իրանք անձամբ տեսած կամ կարդացած էին այդ մատենը: Այս բոլոր հարցերի պատասխանը չկայ ոչ Ոլիմպիոգորոսի խօսքերի, ոչ Խորենացու պատմութեան մէջ:

Ոլիմպիոգորոսը թէ և չի ասում թէ ումից է լսած այդ անյայտ մատենի մասին, բայց նա այդ տեղեկութիւնը առողջ մարդոց լսել ու միտքն է պահել այն մատենի մէջ եղած գրոյցները և նրանց կարգը: Այդ կարող էլ պատմում է նա իր ունեցելիք խմատուցներին և հմտանքներին, խօսելով նախ Բարսեղի մասին, յետոյ նրա որդի Սեմի և ապա նրա կրտսերագոյն որդի Տարբանի մասին: Բայց այս գրոյցներին համար Ոլիմպիոգորոսն ունի նաեւ մի ուրիշ աղբիւր: «Բազումք ի գեղջկաց», ասում է նա, այդ գրոյցները պատմում են մինչև այսօր: Եթէ նա ասում է թէ իր պատմած գրոյցները «Բազումք ի գեղջկաց գրուցն մինչև ցայսօր», ուրեմն նա անձամբ գիտէ այս բանը: Ինչ որ մատեն է լինելու մասին նա «Երեւելիք է լինի (ասեն)», իսկ որ այդ մատենի մէջ եղած գրոյցները «Բազումք ի գեղջկաց գրուցն մինչև ցայսօր» — այդ բանը նա «Երեւելիք գիտէ: Ուրեմն իր պատմած գրոյցները երկու աղբիւրից գիտէ, մէկն այն մարդիկն են, որ նրան պատմել են ինչ որ մատենի մասին և հաղորդել են այն մատենի մէջ եղած գրոյցները մատենի մէջն ունեցած կարգով, իսկ միւս աղբիւրը գեղջուկների պատմածն է: Մատեն եղած է թէ ոչ — այդ խնդիրը անյուծելի է: Բայց թէ գեղջուկների պատմածը նա լսած ու միտքն էր պահած, այս մէկն անվիճելի է: Այս մասին մենք մի ուրիշ ապացոյց ունինք Խորենացու պատմութեան մէջ:

Պատմելով Անակի՝ իրը հալածական կործանաց կողմերը հասնելու մասին՝ Խորենացին գրում է. (Գ. 27). «Եւ աստ ասեմ գրոյց սքանչելի ծերոյն որ ասէր, «ի

նախնեաց ունիմ սոփորութիւն, որդի ի հօրէ առնելով գլխատակ գրուցացս աշտացիկ», որպէս Ոլիմպիոգորայն յաղագս Տաւրոնոյ և Սիմն կոչեցեալ լերինն»։ Վերջին տողը պարզելով՝ կ'ստանանք. «որպէս գլխատակ գրուցացն Ոլիմպիոգորայ յաղագրս Տաւրոնոյ և Սիմն կոչեցեալ լերինն»։ Զակերար գնելով այսպէս բառից յետոյ՝ Խորենացու բնագիրը վերահազմող Մ. Արեղեան ուզում է ասել, թէ այդպէղ վերջանում է սքանչելի ծերի ասածը. մնացածը Խորենացու բառերն են։ Արեմն սքանչելի ծերն ասում է՝ այս գրոյցներն յիշատակը իմ նախնիներից է զալիս՝ որդին հօրից առնելով»։ Իսկ Խորենացին իր կողմից յաւրում է. «ինչպէս Ոլիմպիոգորոսի գրոյցները Տաւրոնի և Սիմ կոչուած լեռան մասին»։ Այստեղից պարզ երևում է որ՝ Խորենացու ասելով Ոլիմպիոգորոսի պատմած գրոյցները սակայն հասած գրոյցներ էին։ Այս մասին անուշադ նա լսած էր այն աւանջաւոր հայ վկայից, որ նրան հաղորդել էր Ոլիմպիոգորոսի պատմած գրոյցները։ Այդ նոյնը հետեւում է և Ոլիմպիոգորոսի խօսքերից թէ՛ «պատմեցից ձեզ և գրոյցս անդիրս յաւանջաւորէն է իւր հաւանքով և պատմեց ինչ որ մատեան Սեմի և Տաւրանի մասին թէ ոչ՝ սա մի տարրեր խնդիր է։ Բայց անվիճելի է որ Ոլիմպիոգորոսն իր պատմած գրոյցներն այդպէս գիտէր, ինչպէս սքանչելի ծերն իր պատմածները, այսինքն սակայն, «որդի ի հօրէ առնելով գլխատակ գրուցաց»։ Այդ գրոյցները Ոլիմպիոգորոս իբրեւ «որդի» կարող էր լսած լինել իր «հօրից»։ Բայց որ նա լսած էր գեղջուկներից, այս մասին կասկած չկայ, քանի որ ասում է «չորս բազումք ի գեղջկաց շաւիղէ մինչև ցածմ»։ Արեմն քննելով որ «գրուցեն», լսած է որ «գրուցեն»։

Ինչ էր այդ մատեանի, կամ որ նոյն է՝ այդ անդիր գրոյցների բովանդակութիւնը։ Գուցէ Գորգին, Բանանը կամ Գալիթը շատ բան էին լսած Ոլիմպիոգորոսից և շատ բան հաղորդած Խորենացուն և մեր ծերունիներին, բայց Խորենացին իր լսածն ամբողջովին չի փոխանցում մեզ, այլ երկրորդում է «չոյժ սակաւութե»։ Մեր իմացածն ընդամենը չորս գրոյց է. 1) Բախտութեւնը նաեւ է «ի Հայս» և հանդիպել ցամաքի։ 2) Նրա Սեմ որդին անցել է հիւսիս

արեւմուտք, հանդիպել է մի երկայնանիստ լեռան, անուր զբն Սիմ և «երկուսնեայ աւուրս» մնալով այն կողմերը՝ վերագործել է իր եկած տեղը։ 3) Նրա կրտսերագոյն որդիներից մինը՝ Տաւրան, բաժանուելով իր հօրից, նորէն անցել է Սիմ լեռան կողմերը, բնակել է նրա մօտ գտնուած փոքրիկ գաւառում, գետի եզերքին, որի անունով գաւառն անուանել է Տաւրոն, իսկ իր սղորած տեղը՝ Մրօնք։ 4) Սեմը մի կարճ ժամանակ ապրել է Բախտարացոց սահմանների մօտ, որի որդիներին մինը մնացել է այնտեղ։ «Որովհետեւ, ասում է Ոլիմպիոգորոս, արեւելքի կողմերը Սեմին Զրուան են ասում և գաւառը մինչև այժմ Զարուանդ են անուանում»։

Բայց հիմա «այլ տակ լուարութե»։ Խորենացին գրում է Սահակ Բագրատունուն, «բայց տուել յաճախագոյն հինքն Արամագնեայց ի նուագս փանդան և յերգրս ցցոց և պարուց զայստիկ ասն յիշատակաւ»։ «Այսինքն այսինքն վերի պատմածները։ Արեմն այն գրոյցները, որ Ոլիմպիոգորոսը պատմում է Յաւանքում իր ունեւորդի հմուտներին և իմաստուններին՝ Հայաստանում «հինքն Արամագնեայց», այսինքն՝ հայ ծերունիներ շատ աւելի յաճախ («առաւել յաճախագոյն») երգում են փանդիսի նուագներով, ցցուց և պարուց երգերի մէջ։ Ոլիմպիոգորոսի պատմած գրոյցներն, այսպիսով, Հայոց ժողովրդական երգերի նիւթ են կազմում։ Այսպէս ասած թակ այդ գրոյցները ո՞ր մէկը պէտք է հասկանալ. քերականորէն գտաւելով կարելի է Բագրատունի հասկանալ։ Բայց ի՞նչ վիճելի համարինք, որ «հինքն Արամագնեայց» երբեք երգած լինեն Բախտարացոց սահմաններում ապրող Սեմի մասին. կարծում եմ անվիճելի պէտք է համարել որ նրանք երգած են Հայաստան նուագ Բախտարութեւն, Հայոց լեռներից մէկը Սիմ անուանող Սիմի և Հայաստանի գաւառներից մէկը Տաւրոն և աւաններից մէկը Մրօնք անուանող Տաւրանի մասին։ Անուագն վերջին երեք գրոյցները պէտք է որ երգուած լինեն Հայաստանում փանդիսի նուագներով, այլապէս իմաստ չէր ունենայ Խորենացու գրած «զայստիկ» բառով վերանունը։

Այստեղ ինքնին ծագում են մի քանի հարցեր։ Ոլիմպիոգորոսը ո՞րտեղից գիտէր

թէ իր պատմածները «բազում ի գեղջկաց
գրուցին մինչև ցայժմ», այսինքն մինչև
իր պատմելու օրը: Ի՞նչ ազգից էին այն
գեղջուկները, որ պատմում էին այդ զը-
րոյցները. ո՞ր էր տեսել ու լսել նրանց.
Յունաստանում թէ այլուր: Երբ Ոլիմպիո-
զորոն ասում է թէ՝ ձեզ պիտի պատմեմ
անպիլր գրոյցներ «յաւանդութենէ ի մեզ
հասնալ», ովքե՞ր են այդ «մեզ» ասածը,
որոնցից մէկը համարում է իրան: Վերջա-
պէս ի՞նչ ազգի զաւակ է Ոլիմպիոզորոսն
ինքը: Զրոյցները պատմում են Յունաս-
տանի մէկում, զուցէ Աթէնքում, ուր մեր
երեք հայերը զնացել էին «իմաստութիւն
վարժելու»: Հաւանօրէն Ոլիմպիոզորոսին
լսում են յոյն իմաստուններ և հմուտներ:
Ասում են հաւանօրէն, որովհետև որջապէս
պնդելու համար բաւարար հիմքեր չկան
Քորինացու հազորդածին մէջ: Որ լը-
սողներից երեքը հայ են եղած, այս մա-
սին տարակոյս չկայ, բայց թէ ի՞նչ ազ-
գից էին միւս խօսողներն ու լսողները և
ինչ լեզուով էին խօսում: զժուար է ասել:
Հաւանական է որ Յունաստանի ուսում-
նական կեդրոններից մէկի մէջ պատմուած
այս գրոյցները լսում էին Նաև կամ Բէ-
ռա՞ք յոյն իմաստուններ և հմուտներ և
հետևապէս խօսակցութիւնը յաւանօրէն էր:
Արդ՝ այս ուսեալ ունկնդիրները որ աշ-
խարհագրութեան և ազգերի բաժանման
մասին շատ մատենների գրոյցներ գիտէին,
որ միեւնոյն գրոյցի տարբերակները գի-
տէին և կարող էին աշխարհական մեկնու-
թիւն տալ պատմածին, տալիս են Բէ-
քոյցս մատենից: Մինչդեռ Ոլիմպիոզոր-
ոսը, որ անկասկած նրանցից պակաս հը-

մուտ չէր, քանի որ «կատարելագոյն էր»
նրանց մէջ, Բէքն է, որ պատմում է
Նաև անպիլր գրոյցներ, աւանդաբար իրան
հասած, գրոյցներ, որ հայ ժողովուրդի
երգերի նիւթն են, որ «հինքն Արամազ-
նեայց» երգում էին «յաճախագոյն ի նը-
ւագս փանդան»: Կրկնում են. ո՞ր և ո՞ր
ազգի գեղջուկներից էր լսած այդ գրոյց-
ները: Յունաստանում և յոյն գեղջուկնե-
րից: Չեմ կարծում: Յոյն ժողովուրդն ի՞նչ
գործ ունէր Սիմ լերան, Տորօն զաւառի
և Սրօնք զիւղի հետ, որ նրանց մասին
երգ կապէր. «յաճախագոյն» երգէր և ա-
ւանդաբար, իր գրոյց, հասցնէր մինչև
Ոլիմպիոզորոսի օրերը: Պէտք է ենթադրել
ուրեմն, որ Ոլիմպիոզորոս կամ հայ էր,
բայց յոյն անունով, որ հաստատուած էր
Յունաստանի մտաւորական կեդրոններից
մէկում: Կամ՝ եթէ յոյն էր և կամ ասորի՝
ապա ծնած ու ապրած էր Հայաստանում
կամ առնուազն Փոքր Ասիայի կամ Ասո-
րիքի հայաշատ մի շրջանում, ուր ասիթ
էր ունեցած իր պատմած գրոյցները լսելու
Հայերից, այսինքն այդ նոյն գրոյցների
մասին երգեր կապող ժողովուրդի բերանից:
Իր խօսքը թէ՝ իր պատմելիք գրոյցները
«յաւանդութենէ» հասած են «է Բէք», — ցոյց
է տալիս որ նա այն ժողովուրդի մէջ է
ապրած կամ զուցէ ո՞յն ժողովուրդի զա-
ւակն է, որ կարող էր այդ գրոյցներ ա-
ւանդաբար հասցնել նրան: Եւ զուցէ ե-
րեք ունկնդիր Հայերից մէկի զնահատու-
թիւնը, թէ Ոլիմպիոզորոս խօսակիցների
մէջ, «կատարելագոյն էր» ազգասիրա-
կան խանդի մի արտայայտութիւն է . . .
(Շարունակելի) Ն. ԱՂԱԲԱՆ

ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ս. ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐԻՈՅ

ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՆԻԿՈՍԻԴԵԱՅ ԲԱՂԱՔԻՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԱՍՆ ՆԻԿՈՍԻԴԵԱՅ (*)

(Շար. ՍԻՆ ԹԻՒ 1266)

Եկայք խափանեցուք խնդրեցուք

(*) Վերնագիրը կարմրադեղով գրեալ: Այսպէս
եւ ի ներքոյ ամենայն վերնագիրը:

չողորմ, զի մի՛ խափանեցէ բարկութիւն
յանկարձ: որպէս խափանեաց զսողմա-
ցիան, որ ոչ խափանեցան խնդրել չողոր-
մութիւն: Խափանեաց սակաւ մի առ տու-